ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/40736-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ, 70-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-080-29.10.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը և պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ եզրակացությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1332 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-080-29.10.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել նվազագույն կենսաթոշակի ստորին շեմ, այն է՝ պարենային զամբյուղի արժեքը, ինչպես նաև ներդնել կենսաթոշակների չափերի ավելացման ժամանակացույց՝ փոխկապակցված սպառողական զամբյուղի արժեքի հետ:

Ընդ որում, ըստ նախագծի 2-րդ հոդվածի՝ միջին աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել սպառողական զամբյուղի արժեքի 70 տոկոսից՝ 2022 թվականի հունվարի 1-ից, 80 տոկոսից՝ 2023 թվականի հունվարի 1-ից, 85 տոկոսից՝ 2024 թվականի հունվարի 1-ից, 90 տոկոսից՝ 2025 թվականի հունվարի 1-ից, իսկ 2026 թվականի հունվարի 1-ից՝ սպառողական զամբյուղի արժեքից:

Նախագծով նախատեսված է նաև միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը:

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը փոխկապակցել նվազագույն կենսաթոշակի չափի հետ:

Նախագծերին կից ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծերի նպատակը կենսաթոշակառուների և տարեց բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարելավումն է:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է.

Սոցիալական ապահովության իրավունքի, այդ թվում՝ կենսաթոշակի (նպաստի) չափի և սպառողական և պարենային զամբյուղների արժեքների միջև փոխկապվածության և համաչափության ապահովումն աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականության առաջնային ուղղություններից մեկն է, ինչն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրում: Ծրագրի «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառ» բաժնի 4.6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը քայլեր է ձեռնարկելու մինչև 2026 թվականը նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին

չափերը հավասարեցնել, համապատասխանաբար՝ պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին:

Քննարկվող հարցի համատեքստում հատկանշական է, որ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքը փոխկապակցված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների հետ: Պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն՝ քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, ի թիվս այլնի՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշման (Սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշում). «Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:»:

Ըստ այդմ, կենսաթոշակների և նպաստների չափերի ավելացման խնդրի լուծումը հարկ է դիտարկել անհրաժեշտ ֆինանսական մեծ ռեսուրսներով ապահովվածության խնդրի լուծման համատեքստում: Հակառակ դեպքում, կենսաթոշակների և նպաստների ավելացման չափերն ըստ տարիների օրենքով ամրագրելիս կարող է առաջանալ իրավիճակ, երբ օրենքի պահանջն օբյեկտիվորեն հնարավոր չլինի կատարել պետության սահմանափակ սոցիալ-տնտեսական հնարավորությունների պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ կենսաթոշակների և նպաստների ավելացման չափերն ըստ տարիների օրենքով ամրագրելը նպատակահարմար չէ:

Նպատակահարմար չէ նաև ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը նվազագույն կենսաթոշակի չափի հետ փոխկապակցելը, քանի որ նպաստների և կենսաթոշակների չափերը ձևավորվում են տվյալ ոլորտում վարվող քաղաքականության շրջանակներում: Այդ չափերի ընդհանրությունը կայանում է նրանում, որ իրենց սոցիալ–տնտեսական բովանդակությունից ելնելով, գործնականում, դրանք պետք է պակաս չլինեն պարենային զամբյուղի արժեքից:

Բացի վերը նշվածից, կիրառման և ժամկետների առումով հստակ չէ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի կիրառությունը 2022 թվականի համար. ըստ նախագծի տրամաբանության՝ 2022 թվականի համար պետք է հիմք ընդունվի 2021 թվականի երկրորդ եռամսյակի միջին գներով հաշված՝ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պարենային և սպառողական զամբյուղների արժեքները, մինչդեռ նույն հոդվածի համաձայն՝ նշված զամբյուղների ամսական արժեքները հաշվարկելու կարգը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանելու է նախագծերն ընդունվելուց հետո:

Նախագծերի ընդունումը 2022 թվականի համար խնդրահարույց է նաև ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության առումով, քանի որ այս դեպքում կպահանջվի ավելի քան 47 մլրդ դրամ, ինչը նախատեսված չէ և գործնականում, գումարի

մեծ չափով պայմանավորված, կարճ ժամկետում հնարավոր չէ նախատեսել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի նախագծով:

Հարկ է նշել, որ կենսաթոշակների և նպաստների չափերի փոխկապակցված տրամաբանության ներքո աշխատանքային կենսաթոշակների և նպաստների չափերի ավելացումը պետք է ուղեկցվի նաև զինվորական կենսաթոշակների համաչափ ավելացմամբ: Սա նշանակում է, որ նախագծերի ընդունման դեպքում արդեն իսկ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով, հարկ կլինի հատկացնել ավելի շատ գումար, քան վերը նշված 47 մլրդ դրամը: Ուստի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրենքների նախագծերն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն պետք է ընդունի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ամփոփելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծերով լրացվող օրենքների գործող հոդվածները թողնել անփոփոխ:

Այդուհանդերձ հարկ ենք համարում նշել նաև, որ՝

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածով, իսկ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը տվյալ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը, մինչդեռ նախագծերն ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: Հետևաբար տվյալ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի ընդունման համար անհրաժեշտ է սահմանել ավելի ուշ ժամկետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանց ընդունման համար լիազորող նորմերը պետք է ընդունված լինեն:

2. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի կարգավորումը որպես եզրափակիչ դրույթ նախատեսելը պարզաբանման կարիք ունի՝ նկատի ունենալով, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ունենում է եզրափակիչ մաս, եթե սահմանվում են՝

1) նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները.

2) գործողության ժամկետները, երբ նորմատիվ իրավական ակտը կամ դրա առանձին մասը նախատեսված է սահմանափակ ժամկետով գործողության համար (ժամանակավոր ակտ կամ ժամանակավոր դրույթ): Այս դեպքում նշվում է ակտի կամ դրա առանձին մասի գործողության հստակ ժամկետը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջեի
եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է կարգավորել նվազագույն կենսաթոշակի չափի, ինչպես նաև ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքերում նպաստի չափի սահմանման հետ կապված հարաբերությունները:

Այս առումով, հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենս-գրքի 147-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում՝

. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ստացվող նպաստների գումարները, բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստների և վարձու աշխատողների ու ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված ֆիզիկական անձանց մայրության նպաստների գումարների,

. բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կուտակային բաղադրիչի շրջանակներում ստացվող կուտակային կենսաթոշակները, այլ պետությունների օրենսդրության շրջանակնե-րում ստացվող կենսաթոշակները և այլ պետությունների կենսաթոշակային ապահովության համակարգի շրջանակներում ստացվող համանման վճարները), բացառությամբ սահման-ված կարգով կամավոր կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության շրջանակներում ստացվող կենսաթոշակների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ նախագծերի ընդունումը չի հանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի վրա ազդեցությանը՝ հայտնում ենք, որ հաշվի առնելով բյուջետային գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից առաջարկվող գնաճի թիրախային մակարդակի 4±1,5 տոկոս առաջարկը (նախագծերին կից ներկայացված հաշվարկների համաձայն՝ 2021 թվականին հաշվարկված պարենային և սպառողական զամբյուղների արժեքների նկատմամբ տարեկան կիրառվել է 5 տոկոս գնաճ), նախագծերով առաջարկվող փոփոխությունները կհանգեցնեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1332 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-080-29.10.2021-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-080-29.10.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով՝

«13. Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի արժեքից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից:»

Հոդված 2. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 14-րդ մասով՝

«14. Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել՝

1) սպառողական զամբյուղի արժեքի 70 տոկոսից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից,

2) սպառողական զամբյուղի արժեքի 80 տոկոսից՝ սկսած 2023 թվականի հունվարի 1-ից,

3) սպառողական զամբյուղի արժեքի 85 տոկոսից՝ սկսած 2024 թվականի հունվարի 1-ից,

4) սպառողական զամբյուղի արժեքի 90 տոկոսից՝ սկսած 2025 թվականի հունվարի 1-ից,

5) սպառողական զամբյուղի արժեքիից՝ սկսած 2026 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 3. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 15-րդ մասով՝

«15. Սույն հոդվածի 13-րդ եւ 14-րդ մասերի կիրառման նպատակով որպես պարենային եւ սպառողական զամբյուղների արժեքներ, հիմք են ընդունվում տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկված՝ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած պարենային եւ սպառողական զամբյուղների ամսական արժեքները:

Պարենային զամբյուղում ներառվող սննդամթերքի կազմը, կառուցվածքը եւ էներգետիկան, պարենային եւ սպառողական զամբյուղների ամսական արժեքները հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝16-րդ մասով՝

«16. Սույն հոդվածի 14-րդ մասի կիրառման նպատակով միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա հունիսի 1-ի դրությամբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուներին վճարման ենթակա՝ հունիս ամսվա կենսաթոշակի գումարը (անկախ կենսաթոշակը վճարվելու հանգամանքից) այդ կենսաթոշակառուների թվի վրա բաժանելու միջոցով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-080'-29.10.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով՝

«13. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի եւ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը չի կարող պակաս նվազագույն կենսաթոշակի չափից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման նպատակը և առաջարկվող լուծումները.

Ներկայացվող նախագծերի նպատակը կենսաթոշակառուների և տարեց բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարելավումն է:

Կենսաթոշակային համակարգը և պետական նպաստները չպետք է դիտարկվեն որպես պետության կողմից ուղղակի օգնություն, այլև դրանց բուն նպատակը աղքատության հաղթահարումն է և հնարավորինս արժանապատիվ կյանքի ապահովումը քաղաքացիների համար: Ցուր չէ, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է», իսկ արդեն նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:» Արժանապատվություն տերմինը ինքնին կարելի է դիտարկել որպես ինքնավար-ինքնուրույն տերմին, որի մեկնաբանության արդյունքում ակնհայտ է Սահմանադիրի նպատակը՝ Մարդու և քաղաքացու արժանապատիվ կյանքի ապահովումը, որն իր մեջ ընդգրկում է նաև սոցիալ-տնտեսական արժանապատվություն: Ի ապացուցումն սրա Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:»

Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:»

Հետևաբար Սահմանադիրի նպատակը ոչ թե ինքնանպատակ կամ անորոշ չափով նպաստի կամ կենսաթոշակի տրամադրումն է, այլև դրա նվազագույն շեմի ապահովումը, որը ենթադրվում է, որ չի կարող պակաս լինել սպառողական զամբյուղի արժեքից: Սպառողական զամբյուղի արժեքի չափով կենսաթոշակի և նպաստի ապահովումը առանց հաշվարկված, ճիշտ և հաջողված տնտեսական քաղաքականության, անհնարին է: Հարկ է նաև նշել, որ նշված կարևորագույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ են մեծ, բայց ոչ անհնարին ֆինանսական ռեսուրսներ և աստիճանաբար իրավիճակային բարելավում, ինչով պայմանավորված օրենսդրական նախագիծը բարձրացնում է կենսաթոշակի և նպաստի չափերը աստիճանաբար: Նման մոտեցումը թույլ կտա ոչ միայն էապես բարձրացնել պետության հատուկ ուշադրության կարիքը ունեցող անձանց սոցիակական վիճակը, այլև կլինի համապարփակ և հնարավոր ու իրատեսական քայլ՝ պետության պոզիտիվ պարտականությունների կատարման տեսանկյունից:

2. Տնտեսական տվյալներ.

Որպես կենսաթոշակային և նպաստային չափերի վերանայման անհրաժեշտություն՝ վերաբերելի է ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի հաշվակված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով հետևյալն է[1]՝

Պարենային զամբյուղի արժեքը	
Տարեկան	431 796.6 դրամ
ամսական	35 983.0 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	
Տարեկան	796 623.7 դրամ (գործակից 1.85)
ամսական	66 568.6 դրամ

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2019 թ. ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից 5184 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի մնավորված սպառողական զամբյուղի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով ունի հետևյալ պատկերը[2].

[1] https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

[2] https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
Պարենային զամբյուղի ամսական արժեքը	27 772.7 դրամ	30 927.4 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը	51 379.5 դրամ	57 215.7 դրամ (գործակից 1.85 1)

Իսկ արդեն ըստ ԱՎԿ հաջորդ վերաբերելի հրապարակման՝ 2-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 37 861 դրամ, սպառողական զամբյուղների արժեքը՝ 70 044 դրամ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է օրենքով սահմանել, որ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից՝ Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի արժեքից 37861 դրամից:

Միաժամանակ, առաջարկվում է միջին կենսաթոշակի չափը ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշներին (2026 թվականին՝ սպառողական զամբյուղի արժեքին) համապատասխանեցնելու սանդղակ: Ըստ այդմ, կենսաթոշակների միջին և նվազագույն չափերը կկազմեն.

	Պար. Զմբ	Սպառ. Զմբ	Նվ. կենս	Նվ. կենս/ Պար. Զմբ	Միջին կենս	Միջին կենս/ Սպառ. Զմբ
2022 թ. հունվարի 1-ից	37861	70044	37861	100 %	49031	70 %
2023 թ. հունվարի 1-ից	39754	73546	39754	100 %	58837	80 %
2024 թ. հունվարի 1-ից	41742	77224	41742	100 %	65640	85 %
2025 թ. հունվարի 1-ից	43829	81085	43829	100 %	72976	90 %
2026 թ. հունվարի 1-ից	46020	85139	46020	100 %	85139	100 %

Ընդ որում, 2021 թվականին հաշվարկված պարենային և սպառողական զամբյուղների արժեքների նկատմամբ տարեկան կիրառվել է 5 տոկոս գնաճ: